Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2023.
«Երեխաների պաշտպանության կենտրոնի հիմնանորոգման» ծրագիր

2024 թվականի մարտի 4-ին Երևանում տեղի ունեցավ «Երեխաների պաշտպանության կենտրոնի հիմնանորոգման ծրագրի» (մինչև 65,220 ԱՄՆ դոլար) դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը:

Դրամաշնորհի պայմանագիրը ստորագրվել է Հայաստանում Ճապոնիայի դեսպան ԱՈԿԻ Յուտակայի և Երեխաների պաշտպանության կենտրոն հիմնադրամի գործադիր տնօրեն Միրա Անտոնյանի միջև: Արարողությանը ներկա էին նաև Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բագրատ Սարգսյանը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության երեխաների հիմնահարցերի վարչության պետ Անահիտ Հովհաննիսյանը, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի երեխաների իրավունքների պաշտպանության վարչության պետ Անահիտ Խաչատրյանը, ՀՀ ոստիկանության անչափահասների հանցագործության և ընտանեկան բռնության կանխարգելման վարչության պետ Էդգար Պետրոսյանը, ինչպես նաև կենտրոնում գտնվող երեխաները և աշխատակազմը:

Այս ծրագիրը նպատակ ունի բարեկարգելու կենտրոնի կենսամիջավայրը՝ մասնակի վերանորոգելով կենտրոնը՝ դրանով իսկ հետագայում նպաստելով սոցիալական ծառայությունների որակի բարձրացմանը: Արդյունքում՝ ծրագրից կօգտվեն ընդհանուր առմամբ 620 երեխաներ և նրանց ծնողները, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձինք:

Աղ ու հացով դիմավորում

Դեսպան Առկիի ելույթը

Տիկին Անտոնյանը և Դեսպան Առկին

Շրջայց կենտրոնում